



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (63)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԴՎԿԻԹ ՄՈՍԻՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում պատմականացման ընդհանուր համատեքստում քննարկվում են սփյուռքի հնարավորության հիմքերը, ներկայացվում են սփյուռքը գիտակցելու գիտակարգային և գրական հայեցակարգերը: Տեսական վերլուծություններից հետո անդրադարձ է կատարվում հայկական սփյուռքի նկատմամբ և առաջ է քաշվում դրույթ, որ այն կայացել է նախևառաջ իբրև գրական փորձառություն հատկապես 1920-ական թվականներին Ֆրանսիայում: Որպես եզրակացություն առաջադրվում է այն վարկածը, որ գաղափարական դաշտում սփյուռքի կազմալուծումը կանխող լավագույն ուղիներից մեկը դրա պատմականացումն է:

Հիմնաբառեր՝ *Սփյուռք, սփյուռքագիտություն, գիտակարգ, հավաքականություն, ցրոնք, պատմականացում, հայրենիք*

Ներածություն: Սփյուռքի գոյությունը կախված է դրա պատմականացման հեռանկարներից: Պատմականացումը ենթադրում է հավաքականության առանցքի ընտրություն և այդ դիտանկյունից պատումների առաջադրում, որոնց շրջանակներում հնարավորություն կստեղծվի գիտակցել սեփական գոյության կերպը ու հիմքեր ստեղծել շարունակականության ապահովման համար: Սփյուռքի և նման իրողությունների պատմականացումը մտածելի է երկու հիմնական ճանապարհով՝ գիտակարգայնացման և զուտ գրական: Սփյուռքի շուրջ խորհրդածությունների գիտակարգայնացումը սկսվել է բուն սփյուռքի ձևավորումից շատ ավելի ուշ և առավելապես վերաբերում է հրեական դեպքին: Հայկական Սփյուռքը՝ հատկապես ֆրանսահայ համայնքի առաջին սերունդը, իրեն ներկայացրել է գրական փորձառության պրիզմայով: Այդ երկու ճանապարհների հետազոտությունը խիստ կարևոր է արդի սփյուռքը հասկանալու և հայրենիքի հետ փոխհարաբերությունները որոշարկելու համար: Տարբեր աշխարհամասերում ցրված անձինք «Սփյուռք» կոչվող հովանու ներքո հայտնվում են լեզվական բնութագրման շնորհիվ: Սփյուռքը չկա որպես այդպիսին, որպես պատրաստի, առարկայական իրականություն. մարդկանց ամեն մի ցրվածություն դեռևս սփյուռք չէ: Ցրվածության շուրջ

խորհրդածությունն էլ է տեղի ունենում որոշակի հավաքականության դիտանկյունից, ցրոնքն էլ է ի վերջո լեզվական գործունեության արդյունք: Սփյուռքը գոյանում է լեզվագիտակցական կամային արարքի շնորհիվ. չկար և հանկարծ հղացվում է առանց իրադրության փոփոխության: Ցրվածությունը նույնն է, բայց արդեն միանգամայն այլ որակ ունի, ձգտում է վիճակ նկարագրող ածականից գոյականանալ, դառնալ գոյ(աբան)ական իրողություն նշանակող միավոր: Իհարկե, գիտակցությունն այստեղ չի նույնանում զուտ ենթակայությանը (սուբյեկտիվությանը), քանի որ գիտակցությունը հիմնավորապես առարկայական ու իրական է: Հոդվածի նպատակն է քննադատական վերլուծության միջոցով ուրվագծել սփյուռքի պատմականացման գիտակարգային և գրական ճանապարհները, ինչն իրագործելու համար խնդիր է դրվել հետազոտել այդ ուղիների հետագծերը և լինելիության կերպերը: Դրա արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սփյուռքի գոյության շարունակականությունն էականորեն վտանգված է, իսկ պատմականացումը լինելիությունն ապահովող երաշխիքներից է:

Ցրոնք և Սփյուռք: Սփյուռքագետ Խաչիկ Թեօլեօեանը, արձագանքելով ակադեմիական շրջանակներում տարածում գտած մտայնությանը, թե սփյուռքը սոցիալ-պատմական ու գիտակարգային երևույթների գործառույթ չէ, այլ առավելապես կապված է հիշողության ու ենթակայական այլ գործընթացների հետ, նկատում է, որ թեև չկա «սփյուռք» կոչվող ո՛չ վայր, ո՛չ էլ իրավաբանական մարմին, այնուամենայնիվ այն մտածելի է, վերլուծելի է և հենց դրանով էլ առարկայական է (Թեօլեօեան, 2022, էջ 496-497): Ներսից հայացքի պարագայում առավել քան կարևորվում է գոյականությունը, քանի որ սփյուռքը, գիտակցելով իրեն, հավակնում է ներկայանալ իբրև գործունակ ենթակա, որ ի զորու է առաջ մղել իրեն, ապահովել իր լինելությունը: Ավելին՝ սուբյեկտայնացումը՝ ենթակայի ձևավորումը, ենթադրում է մնացյալ ամեն ինչի խամրում, ամենայն ենթակա կենտրոնանում է իր վրա և այլ առարկաներն ածանցում է իրենից: Սփոփածությունը, ցրոնքը մտածվում է հավաքականության, հայրենիքի դիրքերից, բայց Սփյուռքի կայացման հետ մեկտեղ առանցքը փոխվում է, կամ առնվազն մեկ առանցք ևս ավելանում է: Սփյուռքը տեսականացնելով՝ Վահե Օշականը խոսում է դրա՝ իբրև հակա-հայրենիքի մասին, մյուս կողմից առաջադրելով հակա-Սփյուռքի գաղափարը, որը վերաբերում է Սփյուռքում բնակվող, բայց դրան չհպատակվողներին (Օշական, 2020, էջ 45): Սփյուռքը կա անվիճելիորեն իբրև սփյուռքյան գիտակցություն, և սփյուռքյան տագնապը, անգամ հայրենիք վերադառնալու հետևանքով Սփյուռքի վերացման վտանգը ավելի շուտ հենց Սփյուռքի մասին է, ոչ թե հայրենիքի: Սփյուռքը առանձին, ինքնուրույն միավոր է, քանի որ ունի

լեզու, մշակույթ, մտահոգություն, որ տարբերում են հայրենիքից դուրս բնակվող մարդկանց խմբից: Սփյուռքի ներկայացուցիչը, լինելու և մնալու համար այդպիսին, նպատակ է հետապնդում՝ հեղափոխություն իրականացնել և իրեն փոխանցված այդ հատուկ լեզվով, մշակույթով գործունեություն իրականացնել՝ սուկ ենթակայից վերածվելով ինքնիշխանի, որ այլևս միայն զոհ չէ, կրավորական գործոն չէ, այլ ներգործական ձևով ազդեցություն է ունենում իր պատմության ստեղծման վրա:

Սփյուռքի նախնական վիճակը՝ ցրոնքը, անհիշելի ժամանակներին է առնչվում, բայց դրա՝ իբրև իրողության արձանագրումը վերաբերում է հրեականությանը, «հրեաները դասական սփյուռք էին» (Huntington, 2004, p. 276): Յրվելու, հունական արմատներով diaspora-ի իմաստաբանական հիմքերն ամփոփված են Հին Կտակարանում, որտեղ դրանց միջոցով սահմանվում է հրեականության տարագրական ճակատագիրը («Տէրը թշնամիներիդ առջև քեզ պարտութեան կը մատնի. դու նրանց դէմ մէկ ճանապարհով կ'ելնես, բայց եօթը ճանապարհով կը փախչես նրանցից: Յրիւ կը գաս երկրի բոլոր թագաւորութիւնների մէջ» /Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, Երկրորդ օրէնք 28:25/): Սփռումը տրոհում է ժողովրդին, լուծարում է հավաքականությունը, իսկ «Ավետյաց երկրից» դուրս հրեաներն իրենց գոյությունը պահպանում են հավաքական հիշողության շնորհիվ՝ համարելով, որ իրենց վտարանդիությունը ժամանակավոր է: Սա diaspora-ի, սփյուռքի հրեական մեկնաբանությունն է, որի առանցքը հողից կտրվածությունն է և երկրի կարոտը: Թեև սփյուռքի գաղափարը սկզբնապես առնչվել է հրեականությանը, բայց, անշուշտ, այն չի սահմանափակվում սուկ դրանով: Նոր Կտակարանում էլ են հանդիպում սփռումի, ցրումի շուրջ դիտարկումներ, որոնք, կարելի է ասել, ինչ-որ իմաստով հրեականին հակադրվող քրիստոնեական մեկնաբանության արդյունք են, համաձայն որի՝ կենտրոնականը, ամենակարևորը Մեսիայի գաղափարն է, որի շուրջ կազմավորվել է Երկնային արքայության՝ իբրև տան պատկերը («և այն օրը Երուսաղէմի եկեղեցու դէմ մեծ հալածանք տեղի ունեցաւ. ու բոլորը, բացի առաքեալներից, ցրուեցին Հրէաստանի և Սամարիայի գիւղերը: (...) և նրանք, որ ցրուած էին, շրջելով ւետարանում էին խօսքը» /Գործք առաքելոց 8:1, 8:4/, «Յակաբոսը՝ Աստծու և Տէր Յիսուս Քրիստոսի ծառան, սփիւռքում եղող տասներկու ցեղերիդ՝ ողջո՛յն» /Սուրբ Յակոբոս Առաքեալի ընդհանրական թուղթը 1:1/) (առավել մանրամասն՝ Մարելի, 2022, էջ 129-130):

Սփյուռքը գոյացել է վաղուց և տևականորեն դիտարկվել է այդ երկու ավանդույթների ծիրում՝ թերևս որպես հիմք ունենալով մտայնությունը, որ դա պարզ գործողության հետևանք է, և ուստի

մտածելիք չկա առանձնապես: Սփյուռքը անդրադարձի նյութ է դառնում, երբ գիտակցվում է իբրև միջավայր՝ տիրույթ, որտեղ իրականացվող կենսագործունեությունը պահանջում է հարաբերությունների գատորոշում և պայմանների որոշարկում: Սփյուռքը գոյանում է, երբ տարագիրները չեն նույնանում օտարների հետ, և մյուս կողմից՝ չեն ապրում այնպես, ինչպես կապրեին հայրենի երկրում: Դա առանձնահատուկ միջավայր է, որ իր փոփոխվող, անկայուն բնույթի պատճառով շարունակ ինքնանդրադարձի կարիք է ունենում: Եթե հավելենք նաև այն փաստը, որ տարագիրների միջև կապ պահպանելը հետզհետե հեշտացավ, առավել պարզ կդառնա այդ կապերի ուսումնասիրման անհրաժեշտությունը և սփյուռքի հետազոտողների ի հայտ գալու հանգամանքը: Ուսումնասիրությունների արդյունքում սփյուռքի՝ իբրև «հայրենիքից դուրս ապրող ժողովրդի» պատկերացումները լրացվեցին, և խնդիր դրվեց սահմանել չափանիշներ, որոնք կբնութագրեն ամենայն սփյուռք:

Սփյուռքի չափանիշները և հայկական դեպքը

Սփյուռքագետ Ուիլյամ Սաֆրանը, հրեական աքսորը համարելով սփյուռքացման տիպական ու «իդեալական» օրինակ, առաջադրում է վեց չափանիշ, որոնք փոխադրելի կլինեն նաև մյուս սփյուռքների վրա. ա) սփյուռքի ներկայացուցիչները կամ նրանց նախնիները որոշակի կենտրոնից ցրվել են օտար տարածաշրջաններում, բ) նրանք պահպանում են հավաքական հիշողություն կամ առասպել իրենց հայրենիքի և դրա պատմության մասին, գ) նրանք օտար հասարակություններում իրենց լիովին ընդունված չեն համարում, դ) իրենց նախնիների հայրենիքը համարում են իրենց իսկական տունը, ուր կուգեին վերադառնալ՝ եթե ոչ իրենք, ապա գոնե իրենց հետնորդները, ե) նրանք հավատում են, որ պարտավոր են միասնաբար նվիրվել հայրենիքի պահպանման ու վերականգնման գործին, զ) շարունակաբար կապ են պահպանում հայրենիքի հետ անձնապես կամ միջնորդավորված կերպով (Սաֆրան, 2022, էջ 93, Վարդանյան 2016): Սաֆրանը, որ հայկական սփյուռքն ամենամոտն էր համարում հրեականին, հակասական է նկատում հայերի վերադարձի առասպելը և Սփյուռքի ավարտվելու գաղափարը, քանի որ հայկական հայրենիքը, այսպես ասած, խնդրահարույց վիճակում է. կա Հայաստանի Հանրապետություն, բայց դա պատմական Հայաստանի մի փոքր մասն է ընդամենը (Սաֆրան, 2022, էջ 95): Ո՞ր պիտի վերադառնա տարագիրը, երբ կամ խորհրդայնացման բովով անցած Հայաստանը իր պատմական հայրենիքը չէ բոլորովին, կամ էլ համարում է, որ Հայաստանը մնացել է հայրենասատեղծ միջավայրից զուրկ: Հրեական շրջանակներում գրեթե

միշտ շրջանառվել է «հաջորդ տարին Երուսաղեմում» կարգախոսը, բայց նույնիսկ այնտեղ սիոնականությունը միակ գաղափարաբանությունը չէ, շատերը մերժել և մերժում են այն, էլ չասած գնչուների մասին, որոնց մոտ ընդհանրապես բացակայում է վերադարձի առասպելը: Ուրեմն սփյուռքի համար էականը հայրենիքից դուրս ցրվածության փորձառությունն ունենալն է և օտարության մեջ չուծացվելու տագնապը պահպանելը, այսինքն՝ միջավայր կայացնելը: Պետության ձևական առկայությունը, դրա լիարժեք չգիտակցումը հաճախ մոռացության է մատնում հայրենիքի գոյության անհրաժեշտությունը: Ի հակադրություն դրա՝ Սփյուռքը դատապարտված է ինքնակայանալ իբրև միջավայր, որտեղ հնարավոր կլինի ինչ-որ կերպ պահել անցյալի հետ կապը և կամուրջ դառնալ սեփական մշակույթի գալիքի համար: Առավել ևս այդպես է հայկական Սփյուռքի պարագայում, որի հիմնարար առաքելությունը իր հետ տեղի ունեցած քայքայումը վկայագրելն է և նախնիների ամեհի, բայցև կորսվող մշակույթը, այդ թվում՝ լեզուն, պահպանելը: Օտարության մեջ լինելն ինքնին կարող է նյութական, ֆիզիկական ոչ մի դժվարություն չառաջացել, հյուրընկալող երկրները կարող են սահուն կերպով ընդունել հայերի տարբերությունները, բայց, միևնույն է, դրանով միջավայրի խնդիրը չի լուծվում, դեռևս հարց է մնում՝ «ի՞նչպես սահմանել ցրումին յանձնուած անհատին օրինավիճակը, ի՞նչպես ստեղծել, ի՞նչպես ժառանգել, ի՞նչպես հաղորդակցութեան եզրեր գտնել իբրև «Հայ», իբրև «հայ մտաւորական», շրջապատին հետ» (Նշանեան, 2018, էջ 261): Սփյուռքի խնդիրը հաղորդակցության խնդիր է նախևառաջ, իսկ դա լուծելի չէ պարզ հրամայականների կամ տեսականորեն ձևակերպված չափանիշների միջոցով: Սփյուռքը գիտակարգի գործառնության արդյունք չէ, սփյուռքագիտությունն ինչ-որ իմաստով ուշացած գործիքակազմ է, սփյուռքն ավելի շուտ գրական-բանաստեղծական փորձառության բովում է ծնվում, որովհետև այդ փորձառության մեջ ներունակորեն սփյուռքյան սաղմեր կան. բանաստեղծությունը մայրենի լեզվի սահմանները զանցող, մատույցները լքող ուժ է, որ հայտնվում է անհայտ տիրույթում և դա թարգմանելով ապրեցնում լեզուն: Բանաստեղծությունը միջավայրի բացակայության տագնապի արձանագրումն է և դրանով իսկ նոր միջավայրի ստեղծումը: Ճիշտ նույն կերպ Սփյուռքն անընդհատ իր սահմաններից դուրս գալու և ինքնահաղթահարման հետագիծը պատմականացնելու կարիք ունի, հակառակ դեպքում կկորցնի իր էությունը, այն է՝ ինքն իր համար միջավայր դառնալու ներուժը: Մ. Նշանեանը, Սփյուռքի ծննդաբանությունն ուրվագծելով, առանձնացնում է երեք սերունդ, որոնցից առաջինը, հատկապես ի դեմս Յակոբ Օշականի, Աղետը գրով դիմագրավելու անկարելիության տագնապը բարձրացնելու խնդիր ուներ, երկրորդը օտարության սարսափն էր ձևակերպում, իսկ

երրորդը մեռյալ լեզվով թարգմանելու և եղած պատմությունը ամրագրելուն էր միտված (Նշանեան, 2023, էջ 275): Հարցն այն է, թե կարող էր այդքանից հետո Սփյուռքը պատմականացնել իրեն, վերականգնել սերունդների միջև եղած բացերը, բացատրել իր հետ տեղի ունեցած տարբեր վայրիվերումները: Եթե դա նույնիսկ անհնարին ձեռնարկ է, հարկավոր է ձևակերպել, արձանագրել անկարելիությունը:

Գրեթե նույնն է նկատել տալիս Գր. Պըլտեանը, որ Վահէ Օշականի և Խաչիկ Թէօլէօլեանի հետ տևական քննարկումներից հետո՝ 1980 թվականին, խիզախում է գրել հանգանակի կշիռ ունեցող տեքստ, ինչը նշանակում է դիմագիծ հաղորդել Սփյուռքին, բայց որը մինչև 2020 թվականը թողնում է անտիպ՝ դա բացատրելով հետևյալ կերպ. «Բաներ կան ըստ երևոյթին որոնց ժամանակը երբեք չի գար, իսկ երբ կը թուի թէ եկած է, անոնք արդէն ապայծմէ են» (Պըլտեան, 2020ա, էջ 21): Հանգանակի քառասուն տարի անց հրատարակումը ձախողանքի արտահայտումն էր, տեսականորեն մտածելով Սփյուռքը կայացնելու հնարավորության, իդեալական տիրույթ հիմնելու ձախողանքի արտահայտությունը: Գր. Պըլտեանը երևակայում էր, որ հաղորդակցումը կարող է ստեղծագործական միջավայր ստեղծել և ապահովել Սփյուռքի շարունակական գոյությունը. «Ինչ որ մեզ կը միացնէ և որուն պէտքը զգացած ենք բոլորս ան ալ անհրաժեշտութիւնն է խօսքի իսկական շրջագայութեան վայրի մը ստեղծումին: Վայր մը՝ որ տարածելի ըլլայ ամբողջ Սփիւռքին վրայ: Անոր շուրջ լսենք զիրար, հասկնանք զիրար, ի յայտ բերելով մեզ բռնող հակասութիւնները: Ո՛չ մէկ մենախօսութիւն՝ հետևաբար: Հայկական հարցը քաղաքական և ազգային հարց մըն է անշուշտ, բայց նաև հաղորդակցութեան հարց մը: Աղէտը ո՛չ միայն վիրաւոր է դարձուցած աշխարհին հետ մեր յարաբերութիւնները, այլև խախտած մեր կապեր մեր մէջ: Չենք ցանկար յօրինել ընդհանրացեալ թափանցիկութիւն մը բոլորիս միջև. չենք ալ ուզեր կոթնիլ մաշած “հայկականութեան” մը, հայեցիութեան մը, որ ըլլար բոլորս միացնող ձեփը: Հաղորդակցութիւնը կը պահէ տարբերութիւնները» (Պըլտեան, 2020բ, էջ 23): Ամեն ինչ ձևակերպված է ճշգրտորեն, հետևողականորեն, փաստարկված, բայց ապայծմեական է, քանի որ վերացականորեն է դիտարկում Սփյուռքը՝ կտրված այն միջավայրից, որտեղ այն պիտի ստեղծվի: Սփյուռքը միջավայր է որոշակի միջավայրում, և վերջինիս անտեսումը խոչընդոտ է դառնում առավել խորքային խորհրդածությունների և Սփյուռքի պատմականացման համար: Բնիկը, որքան էլ ընդունի տարագրի տարբերությունները, չի հրաժարվի իր պատմության ինքնիշխանությունից՝ գաղթականներին ներգրավելով դրա մեջ: Սփյուռքի գոյության երաշխիքը նրա պատմության լինելիության մեջ է. պատմության՝ ոչ թե ժամանակագրության, այլ ինքն իր տերը

դառնալու, իր ինքնությունը սահմանելու և ուրեմն օտարից ու հայրենիքից տարբերվելու իմաստով: Այս առումով տեղահանվածների առաջին սերունդը, որ հատկապես ապաստան գտավ ԱՄՆ-ում՝ Վահե Հայկը, Արամ Հայկազը և այլք, Սփյուռք չէ դեռևս, որովհետև նրա գրական արտադրանքը ուղղակիորեն շարունակում է արևմտահայ ավանդույթը և պարզապես արտահայտում հայրենիքի հանդեպ կարոտը: Չկա օտարի, ուրիշի հետ հաղորդակցվելու տագնապը, նոր միջավայրը գիտակցելու կամքը, հայ գրականությունը վերափոխելու ու արդիականացնելու մտահոգությունը, Սփյուռքի ձևավորման հիմնական պատճառի՝ Աղետի մտածման կամեցողությունը:

Սփյուռքահայ գրականության փորձառությունը

Նշված հակումներն ակնհայտորեն նկատելի դարձան 1920-ական թվականների վերջերին ֆրանսահայ սերնդի և առաջին հերթին նրա բանաստեղծի՝ Նիկողոս Սարաֆեանի մոտ: Սարաֆեանը օտարության մեջ համառորեն խարխիս որոնող, հայկականությունն ու ստեղծագործականը միավորող միջավայր ստեղծել ջանացող, իր սփյուռքայնությունը լիարժեքորեն ընդունող և այդ դիրքերից հանդես եկող մտավորական է: Նրան նկատի ունենալով է Գր. Պըլտեանն ասում, որ բանաստեղծը հավատում է «հայի ոգու»-ն, այն համեմատում է թշնամական միջավայր ընկած Ռոբինզոնի հետ, որ վերապրելու համար պիտի պատշաճի միջավայրին ու դադարի օտարական ձևանալ (Պըլտեան, 2017, էջ 128): Սարաֆեանի մեկնակետն այն է, որ այլևս հնարավոր չէ վերադառնալ նախաաղետյան վիճակին և ուստի պետք չէ երգել դա: Ձևավորվող Սփյուռքի խնդիրը անջրպետներ գրավելով ու նորանոր տիրույթներ նվաճելով շարունակ առաջ գնալն է, միջազգայնանալը, բայց դա հյուրընկալելի է միայն ազգային յուրահատկությամբ, ինչը նշանակում է, որ առաջ շարժվելը ուղղագիծ ու միաչափ ընթացք չէ, այլ ենթադրում է ձեռքը պահել նախնայաց մշակույթի զարկերակին: Այլ կերպ՝ Սարաֆեանի գրությունները բանակցություն են անցյալից խույս տվող իր ես-ի և այլության հետ պատշաճ հարաբերություն հաստատելու ճիգերի միջև (Կիլլիճեան, 2015, էջ 5): Գրական ասպարեզ դուրս գալու սկզբնական շրջանում, խորհելով ստեղծված իրավիճակի շուրջ, Սարաֆեանը ջանում էր սահմանել տարագիրների անելիքները. «Այրածը այրած է: Ետ չդառնանք հիմա, չիյնանք նոր, լալկան ռոմանթիզմի մը մէջ, չնայինք մեր հրդեհուած անցեալին, չքարանանք անոր դէմ՝ Ղովտի կնկան պէս» (Սարաֆեան, 1994, էջ 15): Նույն թվականին հրատարակած *Անջրպետի մը գրաւումը* ժողովածուում ևս խաղարկում է աստվածաշնչյան Ղովտի կնոջ պատկերը, որ խորհրդանշում է դեպի անցյալ նայելու համար պատժվել:

Սփյուռքի բանաստեղծական դրոշակը դարձած այդ ժողովածուն տարաբախտ աքսորյալին միջավայր որոնող անցորդի փոխակերպելու մղում ունի, որ կոչված է անցյալի նկատմամբ սևեռախոհանքը փոխարինել խենթ կյանքով. «Խենթը իր օրը ըրաւ, / Խելօքն օրին կը սպասէ» («Վերադարձի երգ»): Չապրած կյանքի չափաբաժինը գիտակցաբար ապրելու հիմնարար հրամայական կա բոլոր մակարդակներում, իսկ Սփյուռքում՝ առավել ևս. եթե լիարժեք կերպով չես ապրում կյանքդ, ուրիշներն են ապրում այն՝ հետզհետե քեզ դուրս մղելով կենսական տարածքից: Սարաֆեանը չի հենվում հայրենիքի պատրանքի վրա և ոչ էլ կուրորեն ընդունում է պարտադրված իրավիճակը, տեղատվության ու մակընթացության պես քանդում է բոլոր հին, փտած կառույցները՝ բացահայտելու համար իսկական ավանդականը, որը երբեք արհեստականորեն բեռ չի դառնում, այլ ինքն է առաջնորդում դեպի գալիքը: Եթե ավանդույթ կոչվածը պատկանում է միայն անցյալին, ուրեմն չի առնչվում կյանքին, հետևաբար անզոր ու անիմաստ է: Եթե ավանդույթը չկա նաև ապագայում, ուրեմն անցյալն անարժեք է կյանքի համար: Հայկականը միջազգային թատերաբեմում կայացնելու, աշխարհի մտածողությանը միահյուսելուն է միտված սփյուռքյան մտավորականը, որ ազդակ է փնտրում Հայաստանում, բայցև ծաղկում է նրա պարփակվածությունը և արտասահմանով չհետաքրքրվելու ծուլությունը: Երիտասարդ Սարաֆեանն այսպես էր բնութագրում հայկականության իրավիճակը. «Ստեղծագործութեան համար գրագէտը պէտք ունի միջավայրի կամ ամանդութեան: Մենք ոչ մէկը ունինք, ոչ միւսը: Ունինք ընդհակառակը նեխած գրականութիւն մը, հոետորներու թափօր մը՝ ուր արուեստը կը մնայ շատ անգամ անըմբռնելի, անտեսանելի, ուր նոյնքան աղօտ կը մնայ ցեղին ոգին և ուրկէ անհրաժեշտ է գատուիլ, կարենալու համար, այսուհետև, ստեղծել նոր, ինքնատիպ ու զուտ արուեստ-աշխարհը: Ինչ ճամբով որ ըլլայ, ազգային անշահախնդիր արուեստի մը մեկնող մեր ընկերները պիտի իյնան տափակութեան ու անարիւնութեան մէջ: Օդին մէջ չենք կրնար շինել ատանկ մեծ շենք մը» (Սարաֆեան, 1994, էջ 12): Չուտ ազգային գրականությունը, այսինքն՝ ինքն իր մեջ փակվող, իրեն զովերգող, անցյալը ինքնանպատակ կերպով ոգեկոչող գրականությունն անզոր է հավաքականության գիտակցումն ապահովելու և կյանքի պատմականացման նախադրյալներ ստեղծելու գործում՝ լինի սփյուռքում, թե հայրենիքում: Ազգային գրականությունը հնարավոր է, եթե ունի համաշխարհային գրականության տեսլականը, ինչպես որ ազգային պատմություն կարող են կայացնել միայն համաշխարհային պատմություն հղացողները: Սարաֆեանի ուշադրության կենտրոնում պարզ ցրոնքը սփյուռքի վերածելու աշխատանքն էր, ինչը ենթադրում էր առժամապես թիկունքով շրջվել դեպի հայրենիքը և օգտվել տարբեր երկրների

քաղաքակրթություններից, իսկ հասունացման հետ հիմքեր կստեղծվեն դրանք հաղթահարելու համար: Սարաֆեանի խոսքերով՝ «Մենք պիտի թօթուենք զանոնք օր մը, ու ասելի շուտ պիտի հասնինք մեր խորքին՝ ասելի լաւ պիտի ճանչնանք մենք մեզ ու մենք պիտի նետենք մեր ցանցը, մեր ուռկանը ամբողջ աշխարհի վրայ, վերջէն քաշելու համար զայն և պարպելու մեր երկրին մէջ՝ անոր բերքը» (Սարաֆեան, 1994, էջ 13):

Եզրակացություն

Սփյուռքի գիտակարգայնացումը հետզհետեւ ավելի լայն թափ է առնում՝ ավելի շատ ակադեմիական հոդվածներ են հրատարակվում, ատենախոսություններ են պաշտպանվում, սակայն սփյուռքը, մասնավորապես՝ հայկական Սփյուռքը, նույնքան չի բարելավվում հոգևոր ու նյութական պայմանների առումով: Սփյուռքագիտությունը, որքան էլ կարևոր, այնուամենայնիվ, վերաբերում է իրողության արտաքին կողմին, ի գորու չէ խորքային ձևով ներկայացնել այն փրկարար տագնապը, որի շնորհիվ անընդհատ հետաձգվում է ուժացումը: Սփյուռքահայ առաջին սերունդը խնդիր դրեց գրական փորձառության մեջ պատկերել նոր միջավայրային իրողությունը և դրանով տարբերվել թե՛ իրենց նախորդող արևմտահայ մշակույթից, թե՛ Հայաստանից: Գրականությամբ սկիզբ դրվեց հայկական Սփյուռքի պատմականացմանը, որի շարունակականությունն է դրա գոյության հիմնական գրավականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թէօլէօլեան Խ., «Սփյուռքի ուսումնասիրություններ. անցյալը, ներկան և խոստումը», թարգմ.՝ Ա. Շահնազարյան, Սփյուռքագիտություն. քննական անթոլոգիա: Եր., ԵՊՀ հրատ., 2022, էջ 489-505:
2. Կիլիմեան Յ., «Նիկողոս Սարաֆեան՝ սփյուռքեան բեղուն ինքնութեան մը բանալի», Հորիզոն գրական, թիւ 4 (368), ապրիլ, 2015:
3. Մարելի Ժ., «Եթէ քեզ մոռնամ, Բաբելոն». վերադարձ դէպի տարագրութիւն», ԿԱՄ, թիւ 10, 2022, էջ 119-133:
4. Նշանեան Մ., «Կախեալ է գրելէս», Միտք և արուեստ, 1976-1987. Գրական ու վերլուծական էջեր: Եր., Սարգիս Խաչէնց, Փրինթինֆո, Անտարես, 2018, էջ 256-265:
5. Նշանեան Մ., Թարգմանական դամբանական, Եր., Հայ գրքի կենտրոն, 2023:
6. Պըլտեան Գր., Ֆրանսահայ գրականութիւն. 1922-1972. Նոյնէն Այլը, Եր., Սարգիս Խաչէնց, Փրինթինֆո, Անտարես, 2017:
7. Պըլտեան Գր., «Հանգանակի մը առթիւ», ԿԱՄ, թիւ 8, 2020ա, էջ 12-21:

8. Պըլտեան Գր., «Որպէս հանգանակ. Վաղուան համար», ԿԱՄ, թիւ 8, 2020թ, էջ 22-25:
9. Սարաֆեան Ն., Տեսարանները, մարդիկ և ես, Եր., 1994:
10. Սաֆրան Ու., «Սփյուռքներն արդի հասարակություններում. հայրենիքի ու վերադարձի առասպելներ», թարգմ.՝ Ս. Մանուսյան, Սփյուռքագիտություն. քննական անթոլոգիա, 2022, էջ 92-116:
11. Վարդանյան Հր., «Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեղեղյանի», Հայագիտության հարցեր, 2016, 2 (8), էջ 95-108:
12. Օշական Վ., «Փորձ Սփյուռքի տեսութեան», ԿԱՄ, թիւ 8, 2020, էջ 45-53:
13. Samuel Huntington, Who are We? The Challenges to America's National Identity. Simon & Schuster, 2004.

REFERENCES

1. T'e'o'le'o'lean X., «Sp'yowr'qi owsowmnasirowt'yowner. ancyaly', nerkan ev xostowmy'», t'argm.՝ A. Shahnazaryan, Sp'yowr'qagitowt'yown. qnnakan ant'ologia: Er., EPH hrat., 2022, e'j 489-505: (In Armenian)
2. Kiwlliwtean Y., «Nikoghos Sarafean` sp'iwr'qean beghown inqnowt'ean my' banali», Horizon grakan, t'iw 4 (368), april, 2015: (In Armenian)
3. Marelli Jh., «“Et'e' qez mor'nam, Babelon”. veradard' de'pi taragrowt'iwn», KAM, t'iw 10, 2022, e'j 119-133: (In Armenian)
4. Nshanean M., «Kaxeal e' grele's», Mitq ev arowest, 1976-1987. Grakan ow verlowc'akan e'jer: Er., Sargis Xachenc, P'rint'info, Antares, 2018, e'j 256-265: (In Armenian)
5. Nshanean M., T'argmanakan dambanakan, Er., Hay grqi kentron, 2023:
6. Py'ltean Gr., Fransahay grakanowt'iwn. 1922-1972. Noyne'n Ayly', Er., Sargis Xachenc, P'rint'info, Antares, 2017: (In Armenian)
7. Py'ltean Gr., «Hanganaki my' ar't'iw», KAM, t'iw 8, 2020a, e'j 12-21: (In Armenian)
8. Py'ltean Gr., «Orpe's hanganak. Vaghowan hamar», KAM, t'iw 8, 2020b, e'j 22-25: (In Armenian)
9. Sarafean N., Tesarannery', mardik ev es, Er., 1994: (In Armenian)
10. Safran Ow., «Sp'yowr'qnerd ardi hasarakowt'yownerowm. hayreniqi ow veradard'i ar'aspelner», t'argm.՝ S. Manowsyan, Sp'yowr'qagitowt'yown. qnnakan ant'ologia, 2022, e'j 92-116: (In Armenian)
11. Vardanyan Hr., «Sp'yowr'qi sahmanowmy' ev ezrowyt'i imastayin y'nd-laynman pattwar'neri' y'st Xachik T'eoelyani», Hayagitowt'yan harcer, 2016, 2 (8), e'j 95-108: (In Armenian)
12. O'shakan V., «P'ord' Sp'iwr'qi tesowt'ean», KAM, t'iw 8, 2020, e'j 45-53: (In Armenian)

ДАВИД МОСИНЯН - ДИСЦИПЛИНАРНЫЕ И ЛИТЕРАТУРНЫЕ ВОЗМОЖНОСТИ ИСТОРИЗАЦИИ ДИАСПОРЫ

Ключевые слова: *диаспора, диаспоральные исследования, дисциплинирование, общность, дисперсия, историзация, родина*

Существование диаспоры зависит от перспектив ее историзации. Историзация предполагает выбор оси коллективности и предложение нарративов с той точки зрения, в рамках которой можно будет реализовать собственный способ существования и создать основания для обеспечения преемственности. Историзацию диаспоры и подобных реалий можно рассматривать двояко: дисциплинирование и чисто литературный опыт. Дисциплинирование размышлений о диаспоре началось гораздо позже возникновения самой диаспоры, и относится оно в основном к еврейскому делу. Армянская диаспора, особенно первое поколение француско-армянской общины, представила себя через призму литературного опыта. Изучение этих двух путей очень важно для понимания современной диаспоры и определения ее взаимоотношений с родиной.

DAVIT MOSINYAN - DISCIPLINARY AND LITERARY POSSIBILITIES OF HISTORIFICATION OF THE DIASPORA

Keywords: *Diaspora, diaspora studies, discipline, collectivity, dispersion, historification, homeland*

The existence of the diaspora depends on the perspectives of its historification. Historification implies choosing the axis of collectivity and proposing narratives from that point of view, within which it will be possible to realize one's own way of existence and create foundations for ensuring continuity. The historification of the diaspora and similar realities can be thought of in two main ways: disciplinization and purely literary experience. The disciplinization of reflections on the diaspora began much later than the emergence of the diaspora itself, and it mainly refers to the Jewish case. The Armenian Diaspora, especially the first generation of the French-Armenian community, presented itself through the prism of literary experience. The study of these two paths is very important to understand the modern diaspora and to determine its relationship with the homeland.

Ներկայացվել է՝ 07.04.2023 թ.
Գրախոսվել է՝ 15.04.2023 թ.